

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 43/3

23 հոկտեմբերի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Վաղարշակ Պետրոսյանի 09.10.2012թ-ի դիմում-գանգատը « ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ 18.09.2012թ. թիվ 2114799 ստուգման ակտի դեմ:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 07.09.2012թ. թիվ 2114799 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Վաղարշակ Պետրոսյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 22.02.2002թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 18.09.2012թ-ին կազմվել է թիվ 2114799 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ 11.09.2012թ-ին ժամը 15:30-ին ՎԱՁ գ.Արենի հասցեում գտնվող Ա/Ձ Վաղարշակ Պետրոսյանին պատկանող ավտոտեխսպասարկման կետում կատարվեց հսկիչ գնում 1000 դրամի չափով՝ Վազ 21-06 մակնիշի մեքենայի հովացման համակարգի վրա տեղադրվեց ռետինե խողովակ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Սպասարկող Ա/Ձ Վաղարշակ Պետրոսյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ստուգում իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 15:37-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվությունը՝ 0 դրամ: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո ժամը 15:39-ին մուտքագրվեց կատարված վճարման արժեքը՝ 1000 դրամ և ժամը 15:41-ին նորից դուրս բերվեց <Z> հաշվետվություն 1000 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվեց, որ Ա/Ձ-ի կողմից խախտվել են « Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները: Արդյունքում «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» « օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով:

Ա/Ձ Վաղարշակ Պետրոսյանի գանգատում մասնավորապես նշված է.

Համաձայն Եղեգնաձորի ՏՀՏ պետի 07.09.2012թ թիվ 2114799 հանձնարարագրի՝ Եղեգնաձորի ՏՀՏ աշխատակիցների կողմից ինձ պատկանող ավտոտեխսպասարկման կետում 11.09.2012թ-ին կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում հարկային տեսուչներն առանց որևէ հսկիչ գնում կատարելու այցելել են ավտոտեխսպասարկման կետ, ներկայացրել են վերը նշված հանձնարարագիրը ստորագրման, ՀԴՄ-ից տպել են ինչ-որ չեկեր և հեռացել: Իմ կողմից 11.09.2012թ-ին ժամը 15.30-ին ՎԱՁ 21-06 մակնիշի ինչ-որ անհայտ ավտոմեքենայի վերանորոգում չի կատարվել և դրա դիմաց 1000 դրամ վճարում չի կատարվել:

29.09.2012թ-ին ստուգումից 18 օր հետո Եղեգնաձորի ՏՀՏ-ից փոստով ստացել եմ նամակ, որում առկա է եղել 12.09.2012թ-ին գրված թիվ 2114799 ակտի նախագիծը և 18.09.2012թ-ի թիվ 2114799 ակտը, որով առաջադրվել է տուգանք 150.000 դրամի չափով: Հարկային տեսուչների կողմից ստուգման ակտը կազմվել է առանց որևէ ՀԴՄ կանոնների խախտման հիմքերի և « օրենսդրության պահանջների խախտմամբ: Մասնավորապես, խախտվել են «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» « օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները: Ստուգող տեսուչների կողմից ստուգման ակտի նախագծում և ստուգման ակտում կատարվել են գրառումներ, որ դրանք ներկայացվել են ինձ ծանոթանալու և ստորագրելու, սակայն այդ երկու փաստաթղթերի մասին ես տեղեկացել եմ 29.09.2012թ-ին՝ Եղեգնաձորի ՏՀՏ-ից նամակ ստանալուց հետո: Այդ ընթացքում ինձ որևէ փաստաթուղթ չի ներկայացվել և չի ծանուցվել: Տեսուչների կողմից խախտվել է վերը նշված

օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված բոլոր ժամկետները և ապօրինաբար արձանագրվել է 150.000 դրամի տուգանք:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Վաղարշակ Պետրոսյանը խնդրում է քննության առնել ստուգման ակտի օրինականության հիմքերը և ընդունել արդարացի որոշում:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Վաղարշակ Պետրոսյանի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ դիմում-գանգատը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» «օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն, ակտում նշվում են ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել:

Հանձնաժողովը գտնում է, որ ստուգման ակտում ըստ էության սխալ է նշված իրավական այն նորմը, որի պահանջները չեն կատարվել: Մասնավորապես, ստուգման ակտով արձանագրվել է, որ Ա/Ձ Վաղարշակ Պետրոսյանին պատկանող ավտոտեխսպասարկման կետում կատարվեց հսկիչ գնում 1000 դրամի չափով՝ Վազ 21-06 մակնիշի մեքենայի հովացման համակարգի վրա տեղադրվեց ռետինե խողովակ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով:

Վերոգրյալից հետևում է, որ Ա/Ձ Վաղարշակ Պետրոսյանի կողմից մատուցվել է ծառայություն: Հետևապես, ստուգման ակտում որպես իրավական նորմ, որի պահանջները չեն կատարվել, «Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններ»-ի 19-րդ կետի «բ» ենթակետի փոխարեն պետք է նշվեր նույն կետի «գ» ենթակետը:

«ԿԱ ՊԵԿ վերահաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, հարկային (տարածքային) տեսչությունների պետերին հասցեագրված «ԿԱ ՊԵԿ նախագահի 02.06.2011թ-ի թիվ 01/4-4/[134013]-11 շրջաբերական նամակի (այսուհետ՝ շրջաբերական նամակ) «ՀԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև»-ը բաժնում հստակ նշված են հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման ընթացքում իրականացվող գործողությունները և ստուգման ակտում արտացոլման ենթակա տվյալները (տեղեկություններ):

Շրջաբերական նամակի «ՀԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև»-ը բաժնում նշված է, որ վաճառողի կողմից համապատասխան վճարման արժեքը ՀԴՄ չմուտքագրվելու և ՀԴՄ կտրոն չտրամադրելու դեպքում ստուգումն անցկացնող հարկային ծառայողների կողմից ՀԴՄ-ից դուրս է բերվում <Z> հաշվետվությունը, կատարված վճարման արժեքը մուտքագրվում է ՀԴՄ, դուրս է բերվում կտրոն և կրկին անգամ դուրս է բերվում <Z> հաշվետվությունը: Ընդ որում հարկ է նշել, որ ըստ շրջաբերական նամակի, ստուգման ակտում պետք է նշվի համապատասխան գործողությունը (գնումը) փաստացի կատարող անձի անուն-ազգանունը, որը ներառված է հանձնարարագրում:

Քննարկվող դեպքում շրջաբերական նամակով նախատեսված պահանջները չեն պահպանվել: Մասնավորապես, ստուգման ակտում նշված չէ գնումը կատարած անձի տվյալները:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» «օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում

իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին>:

Քննարկվող դեպքում ստուգման ակտի նախագիծը կազմվել է 12.09.2012թ-ին, իսկ ստուգման ակտը՝ 18.09.2012թ-ին: Սակայն, ստուգման ակտի նախագիծը և ստուգման ակտը Ա/Ձ Վաղարշակ Պետրոսյանին ուղարկվել են փոստային ծառայության միջոցով միայն 28.09.2012թ-ին:

Վերոգրյալից հետևում է, որ ստուգման ակտը կազմվել է <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> << օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետների խախտմամբ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> << օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել << ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ 18.09.2012թ. թիվ 2114799 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ